Դաս 29. «Սասունցի Դավիթ» էպոսը

Քչերը գիտեն, որ Երևանի կայարանում տեղադրված քանդակը Ե. Քոչարի «Սասունցի Դավիթ» քանդակի երկրորդ տարբերակն է, որ վարպետը վերջացրեց 1959 թվականին: Իրականում քանդակն ունեցել է առաջին տարբերակ, որը, սակայն, ունեցավ ողբերգական վախճան: Քանդակից մնացել են միայն մի քանի լուսանկարներ:

««Սասունցի Դավիթ» արձանի ստեղծման գաղափարն առաջացավ 1939 թվականին, երբ նշվում էր մեր ազգային էպոսի հազարամյակը: Մինչև տոնակատարությունների մեկնարկը քիչ ժամանակ էր մնում: Հոբելյանական հանձնաժողովը որոշեց, որ ազգային հերոսի արձանը պետք է տեղադրվի Երևանի երկաթուղային կայարանի առջև, որպեսզի Սասունցի Դավիթը «դիմավորի» մայրաքաղաք ժամանող հյուրերին: Դիմեցին հայտնի քանդակագործներին՝ Արա Սարգսյանին, Սուրեն Ստեփանյանին, Այծեմնիկ Ուրարտուին, սակայն բոլորը հրաժարվեցին, քանի որ ժամկետը շատ սեղմ էր: Հանձնաժողովի անդամներից մեկն առաջարկեց դիմել Քոչարին, ով այդ տարի վերադարձել էր Փարիզից: Քոչարը համաձայնեց կերտել արձանը՝ խնդրելով իրեն տրամադրել մեկ ասիստենտ և գիպս: Նա աշխատում էր անմիջապես կայարանի հրապարակում: Ընդամենը 18 օր անց արձանը պատրաստ էր»:

(Հատված Լալա Մարտիրոսյան-Քոչարի հոդվածից)

Կայարանում տեղադրվեց Դավթի քանդակը, տոնակատարությունն անցավ բարեհաջող, բոլոր հյուրերը գոհ մնացին, սակայն դրանից հետո Քոչարին ձերբակալեցին: Նրան բանտարկեցին, քանի որ քանդակում «մերկացրած սրով հեծյալը նայում էր դեպի «բարեկամ» Թուրքիա...: Եվ Քոչարը ձերբակալվեց, քանի որ Եվրոպայից հայրենիք եկած Քոչարը հայտնվեց ճաղերի հետևում, քանի որ համարձակվել էր Դավթի թուրն ուղղել դեպի բարեկամ Թուրքիայի կողմը: Սակայն հետագայում նա արդարացվեց, իսկ 1959 թվականի դեկտեմբերի 3-ին կայարանում տեղադրվեց «Սասունցի Դավթի» արդեն իսկ երկրորդ քանդակը, որի մեջ Երվանդ Քոչարը ներդրեց իր ամբողջ եռանդն ու հանճարը: Քանդակը շարունակում է զարդարել Երևանն ու հայ քանդակագործության պատմության մի գեղեցիկ էջը: